ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

16 մարտի 2018 թ., ԿԽ-002/18

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԻՐԱՎԱԲԱՆ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍՈՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի» 139-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհուրդը

Որոշում է.

Հաստատել դատավորների ծառայողական առաջխաղացման 2018 թվականի ցուցակում ընդգրկված իրավաբան գիտնականների գործնական հմտությունների զարգացման մասով Արդարադատության ակադեմիայում ուսուցման ծրագիրը, դրա իրականացման կարգը և ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

Նախագահ՝ *Ե. Խունդկարյան*

Անդամներ՝ *Հ. Ասատրյան*

Հ. Բեռկյան

Ա. Հովհաննիսյան

Հավելված
Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի մարտի 16-ի
թիվ ԿԽ-002/18 որոշման

Խորհրդի նախագահ _____ *Ֆ.Ս.Մանուկյան*

Դատավորների ծառայողական առաջխաղացման 2018 թվականի ցուցակում ընդգրկված իրավաբան գիտնականների գործնական հմտությունների զարգացման մասով ուսուցման ծրագիրը, դրա իրականացման կարգը և ժամանակացույցը

1. Գործնական հմտությունների զարգացման մասով ուսուցումը ներառում է փորձաշրջանը << վերաքննիչ քրեական դատարանում և Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում:
2. Փորձաշրջանը սկսվում է 2018 թվականի մարտի 21-ին և ավարտվում 2018 թվականի ապրիլի 11-ին:
3. Գործնական հմտությունների զարգացման մասով ուսուցում անցնող անձանց փորձաշրջանի ղեկավարներին նշանակում է Արդարադատության ակադեմիայի ռեկտորը (այսուհետ՝ Ռեկտոր)՝ հիմք ընդունելով << դատարանների նախագահների խորհրդի կողմից ներկայացված փորձաշրջանի ղեկավարների թեկնածությունները, ովքեր պետք է լինեն << վերաքննիչ քրեական դատարանի դատավորներ:
4. Փորձաշրջանը կազմակերպվում է փորձաշրջանի անհատական ծրագրին *(Ձև 1)* համապատասխան, որում ընդգրկվում են փորձաշրջանի ընթացքում պարտադիր կատարման ենթակա առաջադրանքներ:
5. Փորձաշրջանը սկսելուց առնվազն մեկ օր առաջ Ռեկտորը հաստատում է փորձաշրջանի անհատական ծրագիրը:
6. Փորձաշրջանի յուրաքանչյուր օրվա տևողությունը 10 ակադեմիական ժամ է:
7. Փորձաշրջանի ավարտից հետո գործնական հմտությունների զարգացման մասով ուսուցում անցնող անձը Ռեկտորին է ներկայացնում փորձաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ ամփոփ հաշվետվություն *(Ձև 3)*, որը հաստատվում է փորձաշրջանի ղեկավարի կողմից:
8. Փորձաշրջանի ավարտին փորձաշրջանի ղեկավարը Ռեկտորին է հանձնում գնահատագիր *(Ձև 4)*, որով փորձաշրջանի ընթացքում գործնական հմտությունների զարգացման մասով ուսուցում անցնող անձի գործունեության արդյունքների, նրա գործնական և անձնական հատկանիշների նկարագրությամբ փորձաշրջանը գնահատվում է դրական կամ բացասական:
9. Փորձաշրջանի ղեկավարի կողմից գործնական հմտությունների զարգացման մասով ուսուցում անցնող անձանց փորձաշրջանի գնահատման չափանիշներն են՝
   - անհատական ծրագրով նախատեսված առաջադրանքների ամբողջական կատարումը,
   - իրավական հարցերի շուրջ կարծիք հայտնելու, դիրքորոշումը հիմնավորելու, բանավիճելու ունակությունը,

- աշխատանքային տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու, տրամաբանելու և որոշումներ կայացնելու ունակությունը,
- գործընկերների հետ շփումներում անձնային և մասնագիտական հատկանիշներ դրսևորելու ունակությունը:

10. Գործնական հմտությունների զարգացման մասով ուսուցում անցնող անձը համարվում է Ակադեմիայում ուսուցումն ավարտած, եթե փորձաշրջանի ղեկավարը փորձաշրջանի արդյունքները գնահատել է դրական: